



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 38րդ նստաշրջանի նախօրեակին, Չորեքշաբթի, 12 Մայիս 2010ի առաւօտեան ժամը 10:30ին, Ազգային Առաջնորդարանիս «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեւորականաց միօրեայ համագումար, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ Թեմիս միաբան հայրերուն եւ քահանայից դասուն:

Համագումարէն առաջ, «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ կատարուեցաւ Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւն: Արարողութեան աւարտին, հոգեւոր խորհրդածութեան պահը առաջնորդեց Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան, վեր առնելով Յիսուս Զրիստոսի պատուերը տրուած առաքելներուն եւ անոնց միջոցաւ նաեւ այսօրուան հոգեւորականներուն, թէ՛ «Գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք» (Մտ 28.19): Հայր Սուրբը խօսեցաւ քարոզութեան հասկացողութեան եւ անհրաժեշտութեան մասին, այս տողին մէջէն յիշեցնելով բոլոր հոգեւորականներու առաջնահերթ ու հիմնական կոչումը, միշտ պատրաստ ըլլալով փրկութեան Աւետարանը տարածելու, Աստուծոյ սուրբ խօսքով մարդոց կեանքերը քաղցրացնելու եւ զանոնք Աստուածգիտութեան լոյսով զինելու, մէջբերելով Մաղաքիա մարգարէի խօսքը, թէ՛ «Քահանային շրթները (Աստուծոյ) գիտութիւնը պետք է ուսուցանեն, (մարդիկ) անոր բերնէն (Աստուծոյ) Օրէնքը պետք է լսեն, որովհետեւ անիկա ամենակալ Տիրոջ հրեշտակն (դեսպան) է» (Մղ 2.7):

Ժամը 12:00ին համագումարը սկսաւ իր աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազան Հայրը նախ ողջունեց բոլոր հոգեւոր հայրերը, գնահատեց անոնց նուիրումն ու մատուցած ծառայութիւնը հոգեւոր մարզէն ներս, եւ Մաղաքիա Արք. Օրմանեանի «Խոհք եւ խօսք» գիրքէն հատուած մը կարդալով, խօսեցաւ բնական, բանական եւ բարոյական սկզբունքներու մասին, բոլորը հրաւիրելով՝ իրենց կեանքերը դիտելու այս երեք յոյժ կարեւոր սկզբունքներու պրիսմակին ընդմէջէն:

Առաջնորդ Սրբազանը նաեւ Թեմական աշխատանքներու համապարփակ ներկայացումը կատարեց, սկսելով հոգեւոր-արարողական կեանքէն, ժողովուրդին հետ քահանայից յարաբերութենէն, անցնելով

երիտասարդաց խմբակներու եւ կիրակնօրեայ վարժարաններու աշխոյժ գործունեութեան, Թեմա երիտասարդ ու պատրաստուած նոր քահանաներով օժտելու աշխատանքներուն մասին: Ապա մաղթեց, որ ժողովական այս օրը ընթանայ հեգասահ ու դառնայ՝ պողաբեր:

Սրբազան Յօր բացման խօսքէն ետք կատարուեցաւ Դիւանի ընտրութիւն: Հոգեւորականաց Համագումարի Դիւանի անդամ ընտրուեցան Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, ատենապետ, եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, ատենադպիր: Ատենապետ Սրբազանը նախ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Յօր, իրեն տուած այս հրաւերին համար եւ Թեմէն ներս անոր տարած ժիր ու կայտառ աշխատանքին համար, ապա կոչ ուղղեց քահանայ հայրերուն, որ համախումբ աշխատանքով կարենան լաւագոյնս յագուրդ տալ ժողովուրդի հոգեւոր ու ազգային պահանջներուն, աւելցնելով՝ թէ որակեալ քահանայից խումբով է որ կ'ապահովուի Թեմիս յառաջընթացն ու յաջողութիւնը:

Ա. Նիստի ընթացքին, ներկայացուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովին յղուելիք Կրօնական Ժողովի տարեկան տեղեկագիրը:

Կէսօրին, սիրալիր մթնոլորտի մէջ, տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Համագումարի երկրորդ նիստը սկսաւ յետ միջօրեին: Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայացուց դասախօսութիւն-գրոյց մը, նիւթ ունենալով՝ «Հովիւը եւ եկեղեցական արարողութիւնները»: Հայր Սուրբը շեշտեց հայ հոգեւորականին կոչումը եւ ծիսական արարողական կեանքի անթերի ու գրաւիչ ներկայացումը՝ ի փառս Աստուծոյ եւ ի գոհութիւն հաւատացեալներու հոգեւոր լիցքաւորման:

Ապա տեղի ունեցաւ Կրօնական Ժողով: Առաջնորդ Սրբազան Հայրը եւ քահանայ հայրերը զեկոյցներ տուին յառաջիկային տարուելիք աշխատանքներու մասին: Կատարուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի եկեղեցական երեսփոխաններու ընտրութիւնը, եւ բանաձեւուեցան համագումարին կողմէ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք առաջարկները:

Համագումարի վերջին բաժինով, Նկատի առնուեցան յառաջիկայ ամիսներու աշխատանքներու գլխաւոր հանգրուանները եւ յատկապէս 2010 Հայ Կնոջ նուիրուած նոր ծրագիրներ:

Եզրափակիչ խօսքով, Առաջնորդ Սրբազանը գնահատեց համագումարին մասնակցող հոգեւոր հայրերը, կոչ ուղղելով բոլորին՝ դրական հոգիով ապրելու եւ բացարձակ բժախնդրութեամբ կատարելու իրենց վստահուած առաքելութիւնը:

Երեկոյեան ժամը 5:00-ին, վերջ գտաւ քահանայից համագումարը՝ «Աշակերտք Զրիստոսի» շարականի միատեղ երգեցողութեամբ եւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

## **ANNUAL PRELACY CLERGY CONFERENCE**

On Wednesday, May 12<sup>th</sup>, 2010, the annual Prelacy clergy conference which traditionally takes place on the eve of the Representatives Assembly, was held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The

conference was presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of the clergy order.

The day began with Evening and Morning Services at the "St. Dertad and St. Ashkhen" Chapel, followed by a spiritual meditation by Very Rev. Fr. Barthev Gulumian in which he reflected on a passage from the Gospel of Matthew on the importance of ministering and preaching the word of God.

The conference convened at noon with opening remarks by the Prelate who commended the service and devotion of the clergy members, and wished success to the day's proceedings.

The election of the officers followed, with Archbishop Tabakian elected as the Chairman and Very Rev. Fr. Barthev Gulumian as the Secretary. Archbishop Tabakian thanked the Prelate for the opportunity to participate in the conference and extolled the importance of clergy members working together as members of one family to achieve success in our service.

During the first session the Religious Council report which will be presented at the Representatives Assembly was analyzed by the participants and revised accordingly.

After lunch the second session convened with a lecture by Very Rev. Fr. Muron Aznikian on the calling of clergy and the importance of properly performing the rites and rituals of the Armenian Church.

A discussion on activities anticipated for the upcoming year then took place, including the celebration of the "Year of the Armenian Woman", followed by the election of religious delegates to the Representatives Assembly and the drafting of suggestions to present to the upcoming Assembly.

The conference closed with the Prelate's concluding remarks and benediction.